



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2016 թվականի

թիվ 54

քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 14-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի «Մաքսային հայտարարագրերը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչների մասին» թիվ 378 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, բացառությամբ սույն Որոշմամբ նախատեսված փոփոխությունների 1-ին կետի «ա» ենթակետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերությունների, 2-րդ կետի «բ» ենթակետի եւ 4-րդ կետի:

Սույն Որոշմամբ նախատեսված փոփոխությունների 1-ին կետի «ա» ենթակետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերությունները եւ 2-րդ կետի «բ» ենթակետն ուժի մեջ են մտնում «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

Սույն Որոշմամբ նախատեսված փոփոխությունների 4-րդ կետն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 2-ի
թիվ 54 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման մեջ կատարվող

1. Մաքսային վճարների վճարման մասով արտոնությունների դասակարգչում (Հավելված 7)՝

ա) 1.1 ենթաբաժնում՝

KM ծածկագրով դիրքում «իրավունքի մեջ մտնող» բառերը փոխարինել «անդամ պետությունների» բառերով.

BC ծածկագրով դիրքը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5 եւ 8802 40 003 6 ստորաենթադիրքերում ընդգրկված քաղաքացիական ուղեւորատար այն ինքնաթիռների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնք ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության տարածքում օգտագործելու նպատակներով, ուր ներմուծվում է այդ ապրանքը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ փոխադրումների եւ (կամ) միջազգային փոխադրումների համար BC*».

ՇՊ ծածկագրով դիրքում «Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն եւ Ղրղզստանի Հանրապետություն» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք» բառերով.

ՀՀ ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«Սակագնային առանձնաշնորհում՝ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար BT».

ԷԻՊ ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«Ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի ապրիլի 6-ի թիվ 24 որոշմամբ հաստատված՝ Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների ցանկի համաձայն՝ Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման նպատակներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար ՄԾ».

լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«Ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում այն ապրանքների եւ սրանսպորտային միջոցների համար, որոնք Ֆինլանդիայի Հանրապետության ռեզիդենտների կողմից ներմուծվում են Սայմայի ջրանցքի՝ Ֆինլանդիայի Հանրապետության կողմից վարձակալվող տարածք՝ Ռուսաստանի Դաշնության եւ Ֆինլանդիայի Հանրապետության միջեւ կնքված՝ «Ֆինլանդիայի Հանրապետության կողմից Սայմայի ջրանցքի ռուսական հատվածի եւ դրան հարակից տարածքի վարձակալության եւ Սայմայի ջրանցքով նավարկության իրականացման մասին»

2010 թվականի մայիսի 27-ի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման եւ վարձակալվող տարածքի շահագործման համար ՇԿ».

բ) 2-րդ բաժնում՝

2.1 ենթաբաժնի MB ծածկագրով դիրքում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

2.2 ենթաբաժնում՝

2.2.2 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MB ծածկագրով դիրքում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

2.3 ենթաբաժնի 2.3.2 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

2.4 ենթաբաժնում՝

2.4.2 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MB ծածկագրով դիրքում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

գ) 4-րդ բաժնում՝

4.1 ենթաբաժնում՝

4.1.2 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MB եւ MY ծածկագրերով դիրքերում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

4.2 ենթաբաժնում՝

2.2.4 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MB եւ MY ծածկագրերով դիրքերում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

MY եւ MP ծածկագրերով դիրքերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Մաքսատուրքի վճարումից ազատում՝ «Կրթական, գիտական եւ մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի հունիսի 17-ի համաձայնագրին եւ դրա՝ 1976 թվականի նոյեմբերի 26-ի Արձանագրությանը համապատասխան ներմուծվող ապրանքների համար MY

Մաքսատուրքի վճարումից ազատում՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների եւ ճյուղերի արտադրական կոոպերացիայի զարգացման ընդհանուր պայմանների եւ աջակցման մեխանիզմի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին համապատասխան ներմուծվող ապրանքների համար MP».

MO ծածկագրով դիրքում «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MƏ, MT, MM եւ MH ծածկագրերով դիրքերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Մաքսատուրքի վճարումից ազատում՝ «Մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատելու եւ ստուգաչափման ու չափազիտական վկայագրման նպատակով նորմատիվային փաստաթղթերի, չափանմուշների, չափման միջոցների եւ ստանդարտ նմուշների փոխադրման համար հատուկ թույլտվություններ տրամադրելու մասին» 1995 թվականի փետրվարի 10-ի համաձայնագրի շրջանակներում տեղափոխվող ապրանքների համար MƏ

Մաքսատուրքի վճարումից ազատում՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության եւ Թուրքիայի Հանրապետության կառավարության միջեւ կնքված՝ «Ռուսական բնական գազը Սեւ ծովի ջրատարածքով անցնող

գազատարով Թուրքիայի Հանրապետություն մատակարարելու մասին» 1997 թվականի դեկտեմբերի 15-ի համաձայնագրին համապատասխան ՍԵՆ ծովի ջրատարածքով անցնող գազատարով Թուրքիայի Հանրապետություն արտահանվող ռուսական բնական գազի համար MT

Մաքսատուրքի վճարումից ազատում՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության և Մոնղոլիայի կառավարության միջև կնքված՝ «Ռուս-մոնղոլական «Մոնղոլռոսգվեոմետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 25-ի համաձայնագրին համապատասխան տեղափոխվող ապրանքների համար MM

Մաքսատուրքի վճարումից ազատում՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև նավթային ոլորտում համագործակցության մասին» 2009 թվականի ապրիլի 21-ի համաձայնագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության տարածք ներմուծվող ապրանքների համար MH».

4.3 ենթաբաժնում՝

4.3.2 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

K ծածկագրով դիրքը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ակցիզի վճարումից ազատում՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների և ճյուղերի արտադրական կոոպերացիայի զարգացման ընդհանուր պայմանների և աջակցման մեխանիզմի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին համապատասխան ներմուծվող ենթաակցիզային ապրանքների համար K».

4.4 ենթաբաժնում՝

4.4.2 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MB եւ MY ծածկագրերով դիրքերում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

МЯ եւ МП ծածկագրերով դիրքերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ԱԱՀ-ի վճարումից ազատում՝ «Կրթական, գիտական եւ մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի հունիսի 17-ի համաձայնագրին եւ դրա՝ 1976 թվականի նոյեմբերի 26-ի Արձանագրությանը համապատասխան Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների համար МЯ

«ԱԱՀ-ի վճարումից ազատում՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների եւ ճյուղերի արտադրական կոոպերացիայի զարգացման ընդհանուր պայմանների եւ աջակցման մեխանիզմի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին համապատասխան ներմուծվող ապրանքների համար МП».

МК ծածկագրով դիրքում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

МЭ ծածկագրով դիրքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ԱԱՀ-ի վճարումից ազատում՝ «Մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատելու եւ ստուգաչափման ու չափագիտական վկայագրման նպատակով նորմատիվային փաստաթղթերի, չափանմուշների, չափման միջոցների եւ ստանդարտ նմուշների փոխադրման համար հատուկ թույլտվություններ տրամադրելու մասին» 1995 թվականի փետրվարի 10-ի համաձայնագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների համար МЭ».

МН ծածկագրով դիրքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ԱԱՀ-ի վճարումից ազատում՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջեւ նավթային ոլորտում համագործակցության մասին» 2009 թվականի ապրիլի 21-ի

համաձայնագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների համար MH».

դ) 5.2 ենթաբաժնի 5.2.1 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

ե) 6-րդ բաժնում՝

6.2 ենթաբաժնի 6.2.1 կետի անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

6.4 ենթաբաժնի 6.4.2 կետում՝

անվանման մեջ «համաձայնագրերով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

MO ծածկագրով դիրքում «համաձայնագրերի» բառը փոխարինել «պայմանագրերի» բառով.

զ) լրացնել հետևյալ բովանդակությամբ «*» նշանով ծանոթագրությամբ՝

«* Նշվում է նաև «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի թիվ 3 հավելվածի 44-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությամբ եւ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Ղրղզստանի Հանրապետության միանալու հետ կապված՝ «Ղրղզստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի, Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերի եւ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի կիրառման պայմանների եւ անցումային դրույթների վերաբերյալ» 2015 թվականի մայիսի 8-ի արձանագրության 1-ին հավելվածի 46-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությամբ սահմանված ներմուծման մաքսատուրքերի վճարման մասով արտոնությունները կիրառելու դեպքում:

2. Մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչում (Հավելված 8)՝

ա) 1-ին բաժնում՝

01011, 01017, 01018, 01021, 01022, 01031, 01041, 01042, 01061 եւ 01062 ծածկագրերով դիրքերը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«01011 Ապրանքների ներմուծման եւ (կամ) արտահանման լիցենզիա

01017 Այն ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման թույլտվություն, որոնց նկատմամբ սահմանված է ավտոմատ լիցենզավորում (հսկողություն)

01018 Հետեւյալի տրման հետ կապված պարզաբանում (եզրակացություն)՝

— ապրանքների (օգոնաքայքայիչ նյութերի եւ դրանք պարունակող արտադրանքի, թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհանդիսացող թունավոր նյութերի) արտահանման եւ (կամ) ներմուծման թույլտվություն.

— դեղամիջոցների եւ դեղանյութերի ներմուծման եզրակացություն (թույլտվություն)

01021 Քաղաքացիական եւ ծառայողական զենքի, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերի եւ դրա փամփուշտների ներմուծման եւ (կամ) արտահանման եզրակացություն (թույլատրագիր)

01031 «Անհետացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» 1973 թվականի մարտի 3-ի կոնվենցիայով նախատեսված թույլտվություն (սերտիֆիկատ, հավաստագիր)

01041 Քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների եւ բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող ներմուծման եզրակացություն (թույլատրագիր)

01061 Բույսերի պաշտպանության միջոցների (թունաքիմիկատների) ներմուծման եզրակացություն (թույլատրագիր)».

01073, 01074, 01081 - 01083, 01085, 01091 - 01093, 01101, 01102, 01111, 01112, 01121, 01122, 01131 եւ 01132 ծածկագրերով դիրքերը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով`

«01081 Հետեւյալի ներմուծման եզրակացություն (թույլատրագիր)`

— կլինիկական հետազոտություններ, փորձաքննություն անցկացնելու, պետական գրանցում իրականացնելու, կոնկրետ հիվանդի կենսական ցուցանիշների համաձայն բժշկական օգնություն ցուցաբերելու կամ հազվադեպ հանդիպող եւ (կամ) առանձնահատուկ ծանր պաթոլոգիայով սահմանափակ թվով պացիենտներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված չգրանցված դեղամիջոցներ եւ դեղանյութեր.

— կլինիկական հետազոտություններ անցկացնելու համար նախատեսված գրանցված դեղամիջոցներ եւ դեղանյութեր.

— մարդասիրական օգնություն (աջակցություն), արտակարգ իրավիճակներում օգնություն ցուցաբերելու համար նախատեսված գրանցված կամ չգրանցված դեղամիջոցներ եւ դեղանյութեր

01091 Ծածկագրման (գաղտնագրման) միջոցների ներմուծման եւ (կամ) արտահանման եզրակացություն (թույլատրագիր)

01095 Տեղեկատվությունը գաղտնի կերպով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների ներմուծման եւ (կամ) արտահանման եզրակացություն (թույլատրագիր)

01101 Մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների արտահանման եզրակացություն (թույլատրագիր)

- 01111 Հանքաբանական, հնէաբանական հավաքածուների, բրածո կենդանիների ոսկորների արտահանման եզրակացություն (թույլատրագիր)
- 01121 Կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի արտահանման եզրակացություն (թույլատրագիր)
- 01125 Հազվագյուտ եւ անհետացման վտանգի տակ գտնվող կենդանի վայրի կենդանիների եւ վայրի բույսերի այնպիսի տեսակների արտահանման եզրակացություն (թույլատրագիր), որոնք ներառված են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կարմիր գրքերում:
- 01131 Մարդու օրգանների եւ հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրիչների, մարդու կենսաբանական նյութերի նմուշների ներմուծման եւ (կամ) արտահանման եզրակացություն (թույլատրագիր)

01143 ծածկագրով դիրքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«01143 Հետեւյալի ներմուծման եւ (կամ) արտահանման պետական վերահսկողության ակտ՝

— թանկարժեք քարեր.

— թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքներ».

01191 ծածկագրով դիրքը լրացնել «Բացառությամբ 01192 ծածկագրով դիրքում նշված փաստաթղթի» բառերով.

01192 ծածկագրով դիրքում «(Ռուսաստանի Դաշնության համար)» բառերը հանել.

01193 ծածկագրով դիրքը հանել.

01201 ծածկագրով դիրքից առաջ լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«01194 Լիազորված մարմնի տեղեկանք, որով հաստատվում է արտադրանքի պատկանելիությունը դեղամիջոցներին, բժշկական եւ անասնաբուժական նշանակության ապրանքներին՝ այն ստացողի դեղատնային պահեստ հանձնելու պայմանով, որն իրականացնում է դեղամիջոցների, բժշկական եւ անասնաբուժական նշանակության ապրանքների ընդունումը, պահպանումը, իսկ համապատասխանության հաստատման ընթացակարգն անցնելուց հետո՝ նաեւ բացթողումը եւ իրացումը, դիմումատուի՝ նրա պատասխանատվության վերաբերյալ երաշխիքը (Ղրղստանի Հանրապետության համար)».

01209 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«01210 Հայաստանի Հանրապետությունում միակողմանի կարգով կիրառված արգելքների եւ սահմանափակումների (ժամանակավոր միջոցառումների) պահպանումը հավաստող փաստաթղթեր».

01221 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«01225 Ղրղստանի Հանրապետությունում միակողմանի կարգով կիրառված արգելքների եւ սահմանափակումների (ժամանակավոր միջոցառումների) պահպանումը հավաստող փաստաթղթեր».

01241 ծածկագրով դիրքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«01241 Չմշակված բնական ալմաստների հավաստագրման միջազգային սխեմայի սերտիֆիկատ (սերտիֆիկատի մասին տեղեկություններ) (Քիմբերլյան գործընթացի սերտիֆիկատ)».

01301 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

- «01311 Հանքային հումքի արտահանման եզրակացություն (թույլատրագիր)
- 01321 Վտանգավոր թափոնների ներմուծման եւ (կամ) արտահանման եզրակացություն (թույլատրագիր)
- 01332 Արտահանող պետության իրավասու մարմնի՝ թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ դրանց պրեկուրսորների կոնկրետ խմբաքանակի արտահանման թույլտվություն կամ այդ մարմնի կողմից պաշտոնական ծանուցում այն մասին, որ նշված թույլտվությունը չի պահանջվում».

բ) 6-րդ բաժինը 06017 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«06018 Ապրանքի ծագման EAV ձեւի սերտիֆիկատ».

գ) 10-րդ բաժինը 10044 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«10050 Տեղեկություններ՝ քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցները եւ (կամ) բարձր հաճախականության սարքերը, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող, քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային այն միջոցների եւ բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող, միասնական ռեեստրում ներառելու մասին, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելիս չի պահանջվում ներկայացնել լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագիր)

10051 Պետական ռեեստրի համապատասխան տեղեկատվական համակարգում կամ գրանցման հավաստագրում, կամ դեղամիջոցների պետական ռեեստրից քաղվածքում պարունակվող՝ դեղամիջոցների եւ դեղանյութերի գրանցման մասին տեղեկություններ

10052 Համապատասխան ծանուցումը ծածկագրման (գաղտնագրման) միջոցների եւ դրանք պարունակող ապրանքների բնութագրերի ծանուցումների միասնական ռեեստրում ներառելու մասին տեղեկություններ»:

3. Այն հարկերի, վճարների եւ այլ վճարումների տեսակների դասակարգչի 2-րդ բաժնում, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (Հավելված 9)`

ա) 2.4 ենթաբաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.4.17 դիրքով`

«2.4.17. Միջին թորվածքների համար ակցիզ 4260».

բ) 2.5 ենթաբաժնում`

2.5.1 կետը 4172 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով`

«Միջին թորվածքների համար ակցիզի վճարումը հետաձգելու համար տոկոսներ 4262».

2.5.2 կետը 4173 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով`

«Միջին թորվածքների համար ակցիզի վճարումը հետաձգելու համար տոկոսներ

4263».

գ) 2.6 ենթաբաժինը 7015 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով`

«Քաղաքացիաիրավական եւ վարչական պատասխանատվության միջոցների կիրառման արդյունքում ստացված միջոցներ 7030

Մաքսային մարմինների կողմից հարուցված գործերով քրեական 7040».
պատասխանատվության միջոցների կիրառման արդյունքում ստացված միջոցներ

դ) 2.7 ենթաբաժնում՝

9120 ծածկագրով դիրքը «միջոցների (ամրաշրջանակների)» բառերից հետո լրացնել «եւ դրանց կցորդների» բառերով, «միջոցներից (ամրաշրջանակներից)» բառերից հետո լրացնել «եւ դրանց կցորդներից» բառերով.

9130 ծածկագրով դիրքը «միջոցների (ամրաշրջանակների)» բառերից հետո լրացնել «եւ դրանց կցորդների» բառերով.

9130 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«Օգտահանման վճար Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ինքնագնաց 9150 մեքենաների եւ դրանց կցորդների համար, բացի Բելառուսի Հանրապետության տարածքից ներմուծվող ինքնաշարժ մեքենաներից եւ դրանց կցորդներից

Օգտահանման վճար Բելառուսի Հանրապետության տարածքից 9160». Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ինքնագնաց մեքենաների եւ դրանց կցորդների համար

4. Արժույթների դասակարգչում (Հավելված 23)՝

ա) 072 ծածկագրով դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝
«933 BYN Բելառուսական ռուբլի».

բ) 974 ծածկագրով դիրքը լրացնել ծանոթագրության «¹» նշանով.

գ) 428 ծածկագրով դիրքում ծանոթագրության «*» նշանը փոխարինել ծանոթագրության «²» նշանով.

դ) 950 ծածկագրով դիրքում ծանոթագրության «**» նշանը փոխարինել ծանոթագրության «³» նշանով.

ե) 952 ծածկագրով դիրքում ծանոթագրության «***» նշանը փոխարինել ծանոթագրության «⁴» նշանով.

զ) ծանոթագրություններում՝

առաջին ծանոթագրությունից առաջ լրացնել հետեւյալ բովանդակությամբ ծանոթագրությամբ՝

«Վերաբերում է մինչև 2016 թվականի հունիսի 30-ը ներառյալ վճարված դրամական միջոցների համար:».

Ծանոթագրությունների «*», «**» եւ «***» նշանները փոխարինել համապատասխանաբար ծանոթագրությունների «²», «³» եւ «⁴» նշաններով: